

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԶՐՈՅԹՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Դիրբարեան Նարինե

Կրօնական-դաւանաբանական հասկացութիւնները, որպէս տեղանուան կազմիչ, վկայուած են բոլոր ժողովուրդների յատուկ անունների ցանկերում, ընդ որում նրանք տարբեր հնութիւն ունեն՝ սկսեալ անուանակիր էթնոսի ձեւաւորման դարաշրջանից մինչեւ տուեալ ազգի կենսագործունէութեան նոր եւ նորագոյն ժամանակները, որովհետեւ աստուածները եւ նրանց յարակից ատրիբուտներն անբաժան են մարդկային էութիւնից անգամ աստուածամերժութեան կամ ամէլիզմի դարաշրջաններում, երբ հաւատի հետ կապուած հասկացութիւններն արդէն ենթագիտակցութեան մակարդակում են սկսում ազդել անուանիչների վրայ, այսինքն՝ քողարկուած, այլասացութիւնների ձեւով շարունակում են մասնակցել անուանագրմանը:

Կրօնական բովանդակութիւն արտայայտող արմատներից բաղադրուած անուանումները իւրապատուկ դիրք են գրաւում տեղանուանական բառապաշարում իրենց իմաստային բեռնուածութեան պատճառով: Նախ՝ դրանք կայունութեան տեսանկիւնից ամենախոցելի են, քանի որ հաւատափոխութեան հզօր ալիքի առաջին թիրախն են դառնում: Այսպէս՝ հեթանոսութեան անկումից եւ քրիստոնէութեան յաղթանակից յետոյ պատմական Հայաստանի տարածքում ոչ միայն աւերուեցին հեթանոսական մեհեաններն ու քրմական մատենադարանները, որոնց փլատակների վրայ սկսեցին կառուցուել քրիստոնէական տաճարներ ու վանքեր, այլեւ հին տեղանունները փոխարինուեցին նորերով, հին աստուածների անունների անմահացման

փոխարէն ասպարէզ իջան նոր սրբերն ու հերոսները, որոնց անուններից տասնեակ հազարաւոր տեղանուններ առաջացան: Այստեղ յատկապէս պէտք է յիշել անուանագրման տարածուած սկզբունքներից մէկը, երբ յայտնի վանքի կամ սրբատեղի շուրջ առաջացած կամ գտնուող միաւորները՝ գիւղ, շէն, աղբիւր, լեռ, գետ եւ այլք, կոչուում էին նրա անունով: Ձորօրինակ՝ Գրիգոր Նարեկացու սրբութեան լուսապսակի շնորհիւ սկզբնապէս Սբ. Սանդուխտ կամ Գրոց կոչուող վանքը, որ կառուցուել է Ժ. դարում Անանիա Ա Մոկացի կաթողիկոսի նախաձեռնութեամբ հնագոյն ժամանակներից պահպանուած կրօնական շինութեան տեղում (ըստ որոշ աղբիւրների՝ հեթանոսական), վերանուանուել է Նարեկ: Ապա մերձակայքում գտնուող մի ամբողջ գիւղախումբ սկսել է կոչուել Նարեկայ, իսկ յետագայում Հայաստանի տարբեր ծագերում հիմնադրուած գիւղեր եւ աւաններ կոչուել են Նարեկ: Այս անունը ոչ միայն բնակավայրերի անուանագրման հիմք է դարձել, այլեւ ջրանունների, լեռնանունների. Նարեկ է կոչուում գետակ՝ Վանայ լճի աւազանում (նախկինում Փշաւանց կոչուող), լեռնագագաթ՝ Բիւրակն-Մնձուրեան լեռնաշղթայում (նախկինում՝ Արակա), լեռներ՝ Հայկական Տաւրոսի լեռնահամակարգում (Ռչտունեաց լեռնաշղթայի արեւելեան հատուածը), հարթավայր, քարայրներ եւ այլն¹:

¹ Տե՛ս Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 3, Եր., 1991, էջ 969-970:

Նոյն տրամաբանութեամբ խորհրդային աստուածամերժութեան ժամանակներում քրիստոնէական սրբութիւնների անուններով կոչուող վայրերն անուանափոխուեցին համայնավարութեան եւ ընկերավարութեան հետ կապուած գործիչների եւ գաղափարների անուններից բաղադրուած կառույցներով՝ Լեւոնեան, Կարմիր, Նոյեմբերեան, Հոկտեմբերեան, Կիրովակա եւ այլն: Ըստ էութեան խորհրդային գաղափարաբանութիւնը կամ համայնավարութիւնը կրօնի մի տարատեսակ էր՝ իր կուռքերով, պատուիրաններով, ատրիբուտներով, որոնց անուանումներից էլ բաղմաթիւ տեղանուններ ստեղծուեցին: Հայաստանի երրորդ հանրապետութեան հռչակումից յետոյ սկսուեց տեղանուանակերտման հերթական շրջանը մեր լեզուում մասամբ միով դարձ դէպի անցեալ, նաեւ քրիստոնէական արժէքներ, մասամբ միով հայեացք դէպի ապագայ՝ ազատութեան, անկախութեան եւ ազգային արժէքների գերակայութեամբ: Այս շրջանն առանձին տեղանուանագիտական ուսումնասիրութեան արժանի նիւթ է:

Վերոնշեալն ապացուցում է, որ կրօնական բովանդակութեան տեղանուններն ուղղակի արտացոլում են հանրութեան կեանքում տեղի ունեցող պատմամշակութային, քաղաքական, տնտեսական զարգացումները՝ բնապաշտական բաղմաստուածութեան, ծովիւնից անցումը մենաստուածութեան, հիմնական հաւատին զուգահեռ այլ կրօնների առկայութիւնը տուեալ տարածքներում, կրօնական գործօնի ազդեցութեան աստիճանը պետական-քաղաքական կեանքի վրայ եւ այլն: Կրօնական հասկացութիւններից անմահացած տեղանունները դասակարգուում են նախ՝ իմաստային, ծագումնաբանական, ապա՝ կառուցուածքային յատկանիշներով: Իմաստային դասակարգման միջոցով բացայայտուում են լեզուի՝ այս դէպքում տեղանուանական համակարգի եւ լեզուակիրների գաղափարա-

կանացման աստիճանը, հոգեւոր արժեհամակարգը, լեզուամտածողութեան հիմքը: Իմաստային դասակարգումը բաղմաստիճան է: Նախ՝ առանձնացնում ենք հեթանոսական, ապա՝ քրիստոնէական հասկացութիւններից բաղադրուած տեղանունները. իսլամական կամ մահմեդական կրօնին առնչուող տեղանունները դիպուածային են: Այնուհետեւ այս երկու խմբում էլ հնարաւոր է տարանջատել՝ ա) կրօնական լեզունների, աւանդութիւնների հիմքի վրայ առաջացած տեղանուններ՝ Երազամոյն, Երազացոյց, Ագուաի տապան, Ծննդոց անտառ, Գիւղ ութից եւ այլն, բ) կրօնական ծէսերի արարողակարգութեան հետ կապուած տեղանուններ՝ Մատաղաբլուր, Բագնաւան, Բագին, Նշխարք, Խաչիկ, գ) դիցանունների, սրբերի եւ դրանց հակադիր բեւեռների՝ Հերոսների եւ հակահերոսների անուններից ծագող տեղանուններ (այս խումբն ամենամեծն է)՝ Անահտակա, Արամագ, Յուդայի դուռ, Գրիգորաշէն, Սատանի փոր, Բարձեալ, Ծայրանաձոր, դ) կրօնական զգացումներ արտայայտող հասկացութիւնների անուններից կազմուած տեղանուններ՝ Գոհանամ, Կամակատար, Երաշխատր, Զօրավիգ, ե) կրօնական շինութիւններ, հաստատութիւններ նշանակող բառերից կազմուած անուանումներ՝ Վանք, Անապատ, Եկեղեցի, Մատուռաձոր: Յիշեալ խմբերից իւրաքանչիւրը տարբերուում է ե՛լ իր տարածուածութեամբ, գործունակութեամբ, ե՛լ կառուցուածքային կաղապարներով: Ըստ ծագման առանձնացնում ենք.

- I. Նախահայկական (եմթաշէրտային),
- II. Հայկական,
- III. Փոխառեալ տեղանուններ.

Իրանական,
Յունական,
Ասորա-եբրայական,
Արաբական,
Խաղթ:

Ենթադրաբար կրօնական եզրույթներն արժանի են առանձին քննութեան, որովհետեւ նման տեղանունակերտների ծագումնաբանութեան վարկածները երբեմն բաւական հակասական են: Դրանցից նշենք խեթական աղբիւրներում յիշատակուած Tarumus դիցանունը, որի անունից անհնգուել է Տուրուբերանում գտնուող բնակավայրերից մէկի անունը: Այն հնչիւնական աղբիւրներ ունի Տարում տեղանունան հետ եւ աշխարհագրական տեղադրութիւնը եւս համընկնում է Տարունի հետ²: Շումմեր-աքքադական ծագում է վերագրուում Նամէ աստուածուհու անունը, որը հին շրջանում տեղանունակերտ գործառոյթ ունէր³, ինչպէս՝ Նամա, Նամէն, Նամաս, Նամուէ, Նամէական, Նամէնց, Նամանց, Նամէնից, Նամինց: Փոխառեալ տեղանուններից տարածուած են իրանական կազմիչներով կառոյցները, որոնք տեղանունների յարաբերական հին շերտին են պատկանում, այնուհետեւ քրիստոնէութեան մուտքն ուղղակի յանգեցնում է յունական եւ ասորա-բերայական ծագման տեղանուն կազմիչների երեւան գալուստ, իսկ մահմեդականութեանն առնչուող սակաւթիւ տեղանուններն արդէն արաբական ծագման բաղադրիչներ ունեն: Առաւել տարածուած են, այսպէս կոչուած, խառը տեղանունները, որտեղ բաղադրիչներից մէկը բնիկ բառ է, միւսը փոխառութիւն՝ Արեւաշէն, Հրեշտակաձոր, Մահմեդաձոր, Շէյթանասար, Վահագնաձոր, Մհերի դուռ, Յուդայի դուռ եւ այլն:

Ըստ կառուցուածքի աւանդաբար տարբերում ենք պարզ, անհարկ, բարդ եւ բաղադրեալ տեղանուններ⁴: Կրօնական

եզրույթներից կազմուած տեղանուններում հանդիպում են նշեալ 4 բառակազմական տիպերն էլ, սակայն ամենատարածուածը բարդ եւ անհարկ տեղանուններն են՝ Արեգասան, Արփիագոծ, Բագրատաշէն, Աստղկաձոր, Արեգունիք, Հրեշտակաձոր, Մհեհնաձոր, Վանաձոր, Խաչաղբիւր, Խաչիկ, Խաչէն, Նամէական, Նամէի, Վահագնի, Դրախտիկ, Վանք, ապա բաղադրեալ՝ Եօթն մասանց, Աստղկայ լիճ, Մհերի դուռ, Սատանայի կամուրջ, Սատանայի գերեզման, Յուդայի դուռ, Դից մայրի, Վերիճ Վահագնի, Ստորիճ Վահագնի եւ այլն: Բաղադրեալ տեղանունների մէջ ամենազործունակը երկբաղադրիչ կազմութիւններն են, եռաբաղադրիչ եւ բառաբաղադրիչ կազմութիւնները յոյժ փոքրաքանակ են՝ Նոյ ճգնաւորի մեհաւտան, Ծիծաղաբեր Աստուածածին, Ար. Պետրոսի ճեղքի վանք եւ գիւղ: Սակաւադէպ են նաեւ կրօնական բովանդակութեամբ պարզ արմատական տեղանունները՝ Նշխար, Նշան, Խաչ, Արփի, Դրախտ եւ այլն: Կրօնական եզրույթները տեղանունական գործառոյթ ձեռք բերելու համար սովորաբար որեւէ ձեւոյթ են ստանում՝ բառակազմական կամ բառաբարբերական: Բառաբարբերական ձեւոյթներից ամենատարածուածը եզակի կամ յոգնակի թուերի սեռական հոլովի կազմիչներն են, որովհետեւ սեռական հոլովն արտայայտում է անունանորման համար կարեւոր սերման եւ պատկանելութեան իմաստը՝ Աստղկան, Արամազդա, Արփա, Վահագնի, Դից, Նաննց, Ութից:

Հայերէնում կրօնական հաւատալիքների հետ կապուած տեղանուն կազմիչների առանձնացման եւ դասակարգման համար անհրաժեշտ է նախ՝ քննել դրանք ընդհանուր՝ ապելեատիւ բառապաշարի մէջ, ապա՝ հիմնական բառաֆոնդի: Բնորոշ է, որ Հ. Աճառեանը, ապա Գ. Զահուկեանը նման բառերի նախնական կրօնական բովանդակութիւնը ոչ միշտ են հաւաստի համարում: Այսպէս՝ հէնց կրօն բառը, որ ծագում է կրեմ բառից, վաղնջահա-

2 Տե՛ս Ա. Քոսեան, Հայկական լեոնաշխարհի տեղանունները (ըստ խեթական աղբիւրների), Երեւան, 2004, էջ 63:
 3 *Мифологический словарь*, Москва, 1991, стр. 386.
 4 Գ. Զահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն. Առաջագրային շրջան, Երեւան, 1987, էջ 412-413:

յերէնում ունեցել է առաջնային «կարգուկանոն, օրէնք» իմաստը, որից միայն յետոյ է անհնգուել «հաւատ, կրօն» նշանակութիւնը⁵: Հնդեւրոպացիների մօտ աստուծոյ գաղափարը շատ իւրօրինակ զուգակցում էր բաշխելու, բաժին հանելու գաղափարի հետ, որը հաստատուում է *bagh արմատով: Այս արմատից էլ ծագում է աստուծոյ անունը հնդիրանական ցեղեկութիւններում են հայերը՝ ե՛ւ հասարակ, ե՛ւ յատուկ անունների տեսքով (անձնանուն, տեղանուն)՝ Բագին, Բագարան, Բագարատ, Բագաւիճ, Բագասան, Բագրեւանդ, Բագրատակերտ, Բագրատաշէն եւ այլն: Յիշեալ բազ-աստուած արմատը վկայուած է նաեւ փոխաբանների եւ սլաւոնական ցեղերի լեզուներում, այսպէս՝ bog, bogami, boguni: Ընդ որում՝ ակնյայտ է, որ հարուստ լինելու յատկանիշը միանշանակ կապուած է աստուծուն առնչուելու հետ, իսկ նրանից մերժուած լինելը թշուառութեան հոմանիշն է: bogami նշանակում է հարուստ, boguni թշուառ⁶:

Հայերէնի հիմնական բառաֆոնդում, որ հնդեւրոպական մայր լեզուից է ժառանգուած, կրօնին եւ հաւատալիքներին առնչուող եզրերն ի սկզբանէ, այսինքն՝ վաղնջահայերէնից սկսեալ (Ք. ա. III հազարամեակից – ժ. Գ. դար), բաւական աղքատիկ են եղել: Հնդեւրոպացիները եւ միասնութիւնից նոր տրոհուած վաղնջահայերն իհարկէ ունէին պաշտամունքային համակարգ՝ ծիսական արարողութիւններով եւ յատուկ հասկացութիւններով սրբութեան եւ աստուածային վերաբերեալ, բայց դրանք սահմանափակ էին: Այս իրողութիւնը մեր նախնիների իրապաշտ եւ հողեղէն աշխարհընկալման մասին է վկայում: Պատահական է, որ յետագայում հայերը դիւրութեամբ փոխառեցին իրանական դիցարանը՝ բաւարարուելով օ-

5 Նոյն տեղում, էջ 273-274:
 6 Նոյն տեղում, էջ 84:

տար աստուածներով, որոնց մատուցած երկրպագութիւնն էլ սահմանափակուած էր յստակ շրջանակներով: «Ներմուծուած» աստուածները ծագում էին հնդիրանական աշխարհից, եւ նրանց դիւրին մուտքը Հայաստան ե՛ւ Ն. Ադոնցի, ե՛ւ Յ. Կարագեօզեանի կողմից հիմնականում բացատրուած է Հայաստանի եւ Իրանի՝ միեւնոյն արքայատոհմի տիրապետութեան ներքոյ գտնուելու հանգամանքով⁷: Արքայատոհմն անշուշտ նախաձեռնողն էր պաշտօնական հաւատի ընդունման եւ ամրապնդման հաւատի ընդունման եւ ամրապնդման, բայց պէտք է նշել, որ ժողովրդի կողմից այդ եկուոր աստուածները ընդունուեցին անմիջապէս, յօժարութեամբ, անգամ տեղաբնակ որոշ աստուածների պաշտամունքը սկսեց փոխանցուել հնդիրանական ծագման աստուածութիւններին, ինչպէս օրինակ՝ Արա Գեղեցիկի եւ Վահագն Վիշապաքաղի պարագայում: Արա Գեղեցիկին բնորոշ յատկանիշները, պաշտացիկին բնորոշ յատկանիշները, կոթողները, խորհրդանիշները, գրեթէ ամէն ինչ սկսեց վերագրուել Վահագն Վիշապաքաղին, թէեւ հայ դիցաբանութեան մէջ նրանք հանդէս են գալիս միաժամանակ⁸: Տեղանունների կազմութեան մէջ եւս Արա դիցանունը, համեմատած Վահագնի հետ, դարձաւ նուազ գործածական, թէեւ Արա Գեղեցիկը մեր առասպելաբանութեան սիրելի հերոսներից է: Նա համարուում է ազգի նահապետ Արամի որդին, այսինքն՝ միաժամանակ ե՛ւ դիցանուն է, ե՛ւ դիւցազնանուն (էպոնիմ): Եթէ Արայի անունը կան լեռ, բազմաթիւ բնակավայրեր՝ գիւղեր, աւաններ⁹, ապա Վահագնի

7 Տե՛ս Ն. Գ. Ադոնց, Հայաստանի պատմութիւն, Երեւան, 1972, էջ 370. Յ. Կարագեօզեան, Սեպագիր տեղանուններ, Երեւան, 1998, էջ 287:
 8 Հմմտ. Յ. Կարագեօզեան, Աշխարհ, էջ 285-287. Գր. Ղափանցեան, Անտիպ գործեր. Արա Սեպագրեան. Միփոթորչեսկի օբրազ Կրայն, Երեւան, 2008, էջ 18-23:
 9 Եթէ վերանունը գոտ «Արա» դիցանունից եւ խորամուխ լինենք «ար» արմատի առանձին եւ տե-

անունից կազմուել են, եւ ամենակարեւորը, կազմուել են ոչ միայն բնականուհներ, այլեւ կան լեռնանուհներ՝ լեռնագագաթ, լեռնաբազուկ, գետանուն, գաւառանուն: Այս տեղանունական գործունակութիւնն իհարկէ բացատրուում է Վահագնի պաշտամունքի ամրութեամբ, նրան ձօնուած սրբավայրերի առատութեամբ:

Զուտ հայկական դիցանուններն այսպիսով հայոց դիցարանում սակաւթիւ են դարձել գուցէ թէ աստիճանաբար օտար պաշտամունքների մշակութաբանական եւ քաղաքական հզօր ազդեցութիւնների պատճառով: Գ. Զահուկեանն, անդրադառնալով մեր նախնիների պաշտամունքային պատկերացումներին, նշում է, որ աստուածայինը վաղնջահայերի համար մի կողմից առնչուում էր շողացող երկնքին եւ լուսաւոր օրուան, միւս կողմից՝ նախահայրերի պաշտամունքին: Գուցէ այս ընկալման հետ պէտք է կապել զուտ հայկական ծագում ունեցող Աստղիկի պաշտամունքը՝ որպէս սիրոյ եւ գեղեցկութեան աստուածուհու: Այս դիցուհու անունը բաւական գործուն տեղանունական կազմիչ է դառնում՝ Աստղկան, Աստղկաձոր, Աստղկասար, Աստղկաբերդ, Աստղկայ լիճ, Աստղկայ գետ եւ այլն: Աստուածայինի յաւերժական ըմբռնման արդիւնք է արեգակնապաշտութիւնը լայն իմաստով՝ հեթանոսական եւ վերհեթանոսական: Արեգ, արեւ, աւելի սակաւ

դանուանական կիրառութիւնների դաշտ, ապա նրա գործածականութիւնը եւ յաճախականութիւնը անհամեմատելի են փոխառեալ «Վահագն» անունի հետ: Հայերի համար «ար» արմատը ոչ միայն ժողովրդագրու է, այլեւ՝ լեզուամտածողութեան հիմք. գործողութիւն կատարելու գաղափարն ինքնին արտայայտում է այդ արմատով՝ առնել - արարել: Գր. Ղափանցեանն իր՝ յիշատակուած աշխատութեան մէջ անգամ հարցադրում է կատարում՝ Արայի աստուածային կերպարի՞ց են արդեօք հնդեւրոպական լեզուներում ծագել «ar» «մշակել», «arā/ari» «յարութիւն առնել, յառնել» նշանակում արմատները, թէ՞ հակառակը: Նշանատր լեզուաբանն աւելի հակուած է առաջին տարբերակին:

արփի արմատներով տեղանունները գործունակ են եղել մեր պատմութեան գրեթէ բոլոր ժամանակահատուածներում՝ Արեգունի, Արեգին, Արեգա, Արեգաւան, Արեգակաճագ, Արեւիք, Արեւաձոր, Արփի, Արփա, Արփիաւան, Արփիագօծ եւ այլն: Արեգ, արեւ, արփի արմատներով տեղանունները աշխարհագրական մեծ տարածում ունեն (Տուրուբերան, Սիւնիք, Կարին, Ակն, Գեղարքունիք, Արարատեան դաշտ, Կիլիկիա): Արեւի իմաստ արտայայտող տեղանունական կազմիչները հանդիպում են լեռնագագաթների, լեռնաշղթայի, գետերի, լճերի, աղբիւրների, ձորերի, գաւառների, շէների եւ գիւղերի անունումներում, ինչը վկայում է արեւի պաշտամունքի խորութեան եւ ուժի մասին: Նշենք, որ այս լուսատուի անունումը գործուն տեղանունական կազմիչ է նաեւ այսօր, թէեւ ուղղակի կրօնական բովանդակութիւն արդէն չունի, սակայն երկրպագութեան առարկայ շարունակում է լինել ցարդ: Նոյնը մասամբ վերաբերում է հնդեւրոպական երկին արմատին՝ Երկին, Երկնաձոր, Երկնահովիտ, Երկնահաս, Երկնայիճ:

Այսպիսով՝ կրօնական եզրոյթները, որոնք հայերէնում անունանաբանական հիմք էին դառնում, կապուած են նախ՝ հեթանոսութեան, ապա՝ քրիստոնէութեան հետ: Հայաստանում մահմեդականութեան հետ կապուած տեղանունական կազմիչները յոյժ սակաւթիւ են եւ հիմնականում պայմանաւորուած սուլեալ տարածքում մահմեդականների բնակութեան փաստով, այսինքն՝ հիմնականում բնականուհներ են կամ մանրատեղանուններ՝ Իսլամաձոր, Իսլամ փաշայ, Մուհամեդի գիւղ, դաշտ, Շայթան, Շայթանի ձոր եւ այլն: Դրանք բնականաբար արաբական ծագում ունեն:

Կրօնական բովանդակութիւն ունեցող տեղանունական կազմիչների շարքում իւրօրինակ դիրք են զբաղում կրօնական զգացումներ արտայայտող բառերը՝ Կամակատար, Երաշխատր, Զօրավիգ, Փառատր, Բար-

ձեալ, Ծիծաղաբեր, Լուսատրիչ (այն վայրն է, ուր վշտայար տիրամայրը ժպտացել է) եւ այլն: Նման կազմիչները հիմնականում ածականներ են կամ դերբայներ, թէեւ հազուադէպ հանդիպում են նաեւ բայական ձեւեր, օրինակ՝ Գոհաւան լեռնագագաթը, որի մէջ եւս վերականգնում է կրօնական բովանդակութիւն:

Քրիստոնէական բառապաշարը հայերէնում եւս մեծ մասով փոխառեալ է, ինչպէս եւ հեթանոսական հաւատի բառապաշարը, որովհետեւ այն եւս օտարածին էր: Պարսկական դիցանուններին, հաւատքի ատրիբուտներին փոխարինելու եկաւ քրիստոնէութիւնն՝ իր հետ բերելով հրէական, յունա-ասորական փոխառութիւնների ալիքը: Այս շրջանի փոխառութիւններից տեղանունական արժէք են ձեռք բերում հիմնականում անձնանունները, որոնք ըստ էութեան նոր դիցանուններ, դիւցազնանուններ էին՝ քրիստոնէական հաւատքի ջահակիրների անունները՝ Թադէոս, Բարդուղիմէոս, Գրիգոր(Լուսատրիչ), Գրիգոր (Նարեկացի), Յակոբ, Յովհաննէս, Սարգիս, Պօղոս եւ այլն: Հակառակ հեթանոսական բազմաստուածութեան՝ քրիստոնէութիւնը մէկ Արարչի կրօն է. Արարիչ, որը, սակայն, Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու եռամիասնութիւնն է: Բացի դրանից, Քրիստոսի կողքին միշտ նրա աշակերտներն էին, առաքեալները, մարգարէները, որոնք, մարդ լինելով հանդերձ, արագ սրբանում էին, աստուածային լուսապսակ ստանում. նրանց անուններն էլ վերածուում էին տեղանունական կազմիչների:

Բառի տեղանունանցումն աստիճանաբար յանգեցնում է նրա հասկացական ծաւալի սահմանափակման, այսինքն՝ նրա բառային իմաստը մթազնում է, բառը վերածուում է խիստ որոշակի միաւորի՝ բնութեան օբիեկտի կամ բնակավայրի նշանի: Տեղանունը չունի վերացական իմաստ, այն միշտ որոշակի է տարածութեան և ժամանակի մէջ: Օրինակ՝ Խաչ տեղանունն ար-

դէն խաչ բառը չէ իր կրօնահաւատալիքային իմաստով, այլ նշանակում է լեռնագագաթներ Բիւրակն-Մնձուրեան եւ Անտիտաւրոսեան լեռնահամակարգերում, աւան Բարձր Հայքի Մանանաղ գաւառում, գիւղեր Վանի նահանգում եւ այլուր: Նոյնը վաճառ, Սատաւալ, Նշխար, Նշան եւ համանման այլ տեղանունների պարագայում:

Տեղանուններ բաւական յաճախ ծնում են լեզուների, առասպելների հիման վրայ, ուստի եւ կրօնական բովանդակութեան աւանդութիւնները համեմատաբար յաճախ ծնունդ են տալիս բառակապակցութիւն տեղանունների, այսպէս՝ Ագոստի տապան, Բարեւաձոր, ԾԱճճոց անտառ, Սուեւաց անտառ, Գիւղ ութից, Նոյի գերեզման, Նոյ ճգնատրի մեհաւտան, Յուդայի դուռ, Ար. Պետրոսի ճկոյթի վաճառ եւ գիւղ, Դից մայրի, Սատաւալի գերեզման եւ այլն: Կրօնական ծէսերի ատրիբուտների հետ կապուած հասկացութիւնների անունները եւս կարող են տեղանունական կազմիչ դառնալ՝ գործունակութեան տարբեր աստիճաններով՝ Խաչ-ը ամենագործունակներից է, որովհետեւ քրիստոնէութեան թիւ մէկ սրբութիւնն է խորհրդանշում, ընդ որում՝ չմոռանանք, որ խաչն ինքնին, իբրեւ նշան, մեծ հնութիւն ունի՝ բազմաթիւ զծագրական տարբերակներով, եւ նախաքրիստոնէական հարուստ բովանդակութեամբ է օժտուած, որից անկասկած օգտուել են քրիստոնէութեան հիմնադիրները¹⁰, ինչպէս օրինակ՝ Աւետեաց խաչ, Խաչարլոր, Խաչափառ, Խաչակապ, Խաչաբերդ, Խաչաճիտ, Խաչաձոր, Խաչէն, Խաչիկ, Խաչաձառ եւ այլն: Այս տեղանունների որոշ մասի մէջ հնարաւոր է նախաքրիստոնէական բովանդակութիւն պեղել:

10 Քրիստոսի՝ Աստուծոյ որդու կերպարն ինքնին ուղղակի աղերսներ ունի մեռնող եւ յարութիւն առնող աստուածութիւնների հետ, ինչպիսիք մեր Արա Գեղեցիկն է:

Կրօնական շինություններ արտայայտող տեղանունան կազմիչներից ամենակենսունակը եւ վաղնջականը վան/ք արմատն է, որը սկզբնապես նշանակել է բնակատեղի, հաւաքատեղի, ապա որոշակիացել՝ իբրեւ ծիսական, հոգեւոր նպատակներ հետապնդող մարդկանց հաւաքատեղի: Այս բառի ծագումը Հր. Աճառեանը համարում է իրանական, թէեւ առաւել համոզիչ է դրա ընդհանուր հնդեւրոպական ծագումը: Այստեղ ունենք աւան-վան հնարաւոր զուգաձեւութիւնը: Առաջինն ամրակալոււմ է որպէս ընդհանուր նշանակութեան բնակատեղի, իսկ երկրորդը վերածուում է կրօնական շինարարական եզրոյթի: Որպէս տեղանունան կազմիչ արդէն աւելի հազուադէպ ունենք եկեղեցի, մատուռ, անապատ արմատները:

Ի մի բերելով հաւատի հետ կապուած եզրոյթների տեղանունանստեղծ արժէքը՝

պէտք է նշել, որ ե՛ւ հեթանոսական, ե՛ւ քրիստոնէական բովանդակութիւն ունեցող տեղանուններում առանձնանում են 4 տիպի տեղանունան կազմիչներ. ա) ծէսերի եւ հաւատքի ատրիբուտների անուններ՝ բագիւն, արուշան, մեհեան, խաչ, մասն, մատաղ, զոհ, Աշխար, դրախտ, դժոխք, ոգի, հոգի եւ այլն, բ) դիցանուններ՝ լայն ըմբռնմամբ, այսինքն՝ նաեւ քրիստոնէական սրբացուած հերոսների անձնանուններ եւ դրանց հակադիր մութ ուժերի՝ հակահերոսների անուններ, գ) կրօնական զգացումներ արտայայտող որոշիչ-բառեր՝ կամակատար, երաշխատոր, զօրավիգ, փառատոր, բարձեալ, սուրբ, դ) կրօնական շինութիւններ ու հաստատութիւններ նշող բառեր՝ մեհեան, եկեղեցի, վանք, անապատ, մատուռ, կուսանոց եւ այլն:

ԱՔԵՄԵՆԵԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՍԱՏՐԱՊՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Յովհաննես Խորիկեան

Աքեմենեան Պարսկաստանի սատրապական բաժանման համակարգում Փոքր Ասիան (յատկապէս՝ վերջինիս արեւմտեան եւ կենտրոնական շրջանները) ունէր առանձնայատուկ նշանակութիւն, քանի որ Աքեմենեանների յարաբերութիւնները Աթէնքի կամ Սպարտայի հետ գրեթէ միշտ լարուած էին, եւ պատերազմական գործողութիւնների թատերաբեմ դառնում էին նաեւ Աքեմենեանների փոքրասիական տիրոյթները, որոնց մէջ կարեւոր նշանակութիւն ունէր III սատրապութիւնը, որի վարչական բաժանման քննութեանն էլ նուիրուած է սոյն յօդուածը:

Յոյն պատմիչ Հերոդոտոսը, անդրադառնալով Աքեմենեան Պարսկաստանի III սատրապութեանը, գրում է. «Դէպի ներս նաւարկելիս աջակողմեան հելլեսպոնտոսցիներից, փոխադրացիներից, Ասիայի թրակացիներից, պափլագոնացիներից, մարիանդիններից եւ սիրիացիներից (ստացուող) հարկը երեք հարիւր վաթսուն տաղանդ (էր). այս նահանգը երրորդն էր»¹: Պատմիչի տեղեկութիւնից պարզուում է, որ III սատրապութիւնը տարածուել է Փոքր Ասիայի հիւսիսային եւ կենտրոնական հատուածների մեծ մասի վրայ, ընդ որում՝ Փոխադրացի եւ սիրիացիների երկիրը՝ Կապադովկիան², ընդգրկել են հսկայական շրջաններ: Ստորեւ կը քննենք Հերոդոտո-

սի եւ միւս հեղինակների տեղեկութիւնները Աքեմենեան դարաշրջանի Փոխադրացի եւ III սատրապութեան կազմում յիշատակուած մնացած երկրների վարչական ու պատմաաշխարհագրական իրողութիւնների վերաբերեալ:

Ասկանիայից (հաւանաբար՝ ներկայիս Իզնիկ լճի շրջանը) եկած փոխադրացիները մասնակցել են Տրոյական պատերազմին³: Հերոդոտոսի յաջորդ տեղեկութիւնը վերաբերում է Քսերքսէսի՝ Հելլադա արշաւող բանակի էթնիկական կազմի նկարագրութեանը: Պատմիչը փոխադրացիների մասին հաղորդում է հետեւեալը. «Փոխադրացիներն ունէին պափլագոնականին շատ նման հանդերձանք, քիչ տարբեր դրանից: Մակեդոնացիներն ասում են, թէ փոխադրացիները, քանի դեռ բնակուում էին Եւրոպայում՝ մակեդոնացիների հարեւանութեամբ, կոչուում էին բրիգներ. բայց Ասիա տեղափոխուելուց յետոյ իրենց երկրի հետ փոխեցին նաեւ իրենց անունը՝ (կոչուելով) փոխադրացիներ: Արմէնները եւս, լինելով փոխադրական վերաբնակիչներ, զինուած էին փոխադրացիների նման: Այս երկուսին առաջնորդում էր Արտաքսէսը, որն ամուսնացել էր Դարեհի դստեր հետ»⁴: Արմէնների յիշատակութեանն արդէն անդրադարձել ենք⁵, եւ, դատելով Պլատայի ճակատամարտին փոխադրացիների առանձին յիշա-

1 Հերոդոտոս, Պատմութիւն ինը գրքից, թարգմանութիւնը Ս. Կրկեաշարեանի (այսուհետեւ՝ Հերոդոտոս), Երեւան, 1986, III, 90:
 2 Տե՛ս Յ. Խորիկեան, Կապադովկիայի տարածքը եւ սահմանները Աքեմենեան Պարսկաստանի կազմում, - Լրագրեր հասարակական գիտութիւնների, 2010, թիւ 1-2, էջ 107-118:

3 Հոմերոս, Իլիական, հին լուսարեւից թարգմ. Լ. Համբարձումեան (այսուհետեւ՝ Իլիական), Երեւան, 1955, II, 360:
 4 Հերոդոտոս, VII, 73:
 5 Տե՛ս Յ. Խորիկեան, Սատրապական Հայաստանի արեւմտեան եւ հարաւային սահմանները մ. թ. ա. VI-IV դարերում, - ՊԲՀ, 2005, թիւ 3, էջ 181: